

Մ. Հ. ԽԱՄՈՅԱՆ, Քրդերեն լեզվի դարձվածաբանության հիմնադրեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1988, 280 էջ:

М. Х. ХАМОЯН, Основы фразеологии курдского языка, изд-во АН АрмССР, Ереван, 1988, 280 с.

Քրդագիտության ընդհանուր զարգացման «հաշվեկշիռն» մեջ, թերևս պատմաքաղաքական, գործոնների ազդեցությամբ, քրդերենի ուսումնասիրմանն ուղղված նպատակադիր ու հետևողական ջանքերը շատ ավելի են նկատելի: Եվ սակայն զուտ գործնական, «ուտիլիտար» նկրտումների և քերականական կայուն շտամպների պարտադրումներով ծավալվող քրդերենագիտությունը բացառապես որակական ինքնահաստատման նախադրյալներ էր ստեղծում: Մ. Խամոյանի աշխատությունը լեզվաբանական մտքի արդի մակարդակի վրա հատկորոշվում է որպես խորքային, «աննախապաշար» ընդգրկումների վավերացում ու աստիճան:

Սույն ամփոփ մենագրության առարկան, բուն փաստանյութի սահմաններն ու հետազոտական մեթոդը ճշգրտվել-որոշարկվել են տասնամյակներ շարունակ: Հեղինակի «Քուրդ-ուսերեն դարձվածաբանական բառարանը» (1979), որ երկարատև զբաղումների արգասիք է, և պարունակում է 8.000 դարձվածաբանական հոդված, քրդագիտական արժեքով հանդերձ, գրախոսվող ուսումնասիրության հաստատուն «նախաքայլն» է, որա նյութական մատակարարը:

Քրդագետ-դարձվածաբանի ընդհանրացնող աշխատությունը լադկացած է առաջարանից, ներածությունից, յոթ գլուխներից և վերջաբանից: Քրդերենի դարձվածաբանական անբավ լեզվանյութի բաղմաշրջան ու խորքային քննությունը իրականացվել է համաժամանակյա կտրրվածքով: Դիտելի է գիտական ապարատի պատշաճ լրջությունը. օգտագործված է սովետական և արտասահմանյան հեղինակների համապատասխան աշխատանքների գրեթե ողջ բանակությունը: Մատենագիտական-աղբյուրագիտական հիմնադր իմացությունների շրջանակներում էլ, որ պետք է զնահատվի յուրաքանչյուր ասելիքի ինքնուրույնությունն ու գիտական կարևորությունը: Այս առումով ևս Մ. Խամոյանի ուսումնասիրությունը լիովին դիմանում է ամենախիստ քննությանը: Ողջունելի են Քրդստանի (իրանական և իրաքյան) լեզվաբանների դարձվածագիտական հայացքների քննական վերլուծումները: Գաղտնիք չէ, որ սովետական գիտական շրջանները գրեթե անտեղյակ են դրսում կատարվող քրդագիտական բազմաբնույթ աշխատանքներին: Այդ իսկ պատճառով էլ մեզանում փաստալից հակահարված չեն ստանում որոշ վայ-քրդագետների ապակոդավորողական հատկապես եվրոպական քրդական համայնքների դիտական, գործունեության բովանդակության վերաբերյալ: Մ. Խամոյանի աշխատությունն իր ընդլայնված ու մասնագիտական ընդգրկումների որակով որոշակի բան արդեն ասում է քրդագիտության, ասպարեզ ներխուժած «ամենագետ» դիվերտանտներին ու խուճապարարներին:

Ուսումնասիրության արժեքավորման պահանջը ենթադրում է զնահատության երկու տեսանկյունների տարբերակում՝ քրդագիտական-քրդերենագիտական և ընդհանուր լեզվաբանական-դարձվածագիտական:

Քրդական լեզվաբանություն մեջ ըստ էության սկզբնավորվում ու միաժամանակ ձևավորվում է գիտական մի նոր, պատմահոգեբանական առումով նշանակալից ուղղություն: Համաշխարհային մասշտաբով համընդհանուր վերադարձը ազգային-էթնիկական արմատներին ու կենարար ակունքներին լեզվաբանության մեջ դրսևորվում-վավերացվում է դարձվածաբանական գիտաճյուղի «ինքնորոշման» համարձակ ու արդյունավոր հիմնավորումներով: Մ. Խամոյանի մենագրությունն առանձնաշնչավոր է ինչպես գիտական-հետազոտական, այնպես էլ ազգային, ինքնաճանաչման-ինքնահայեցման լիցքերով: Քուրդ ժողովրդի աշխարհաճանաչողության ու աշխարհավերաբերմունքի իմաստալից բանաձևումներն այստեղ նուրբ զգացողությամբ ու հրմտորեն քննվում են իմաստաբանական, կառուցվածքային-քերականական, կիրառական, ֆունկցիոնալ-ոճաբանական, հանրալեզվաբանական մակարդակներով: Դարձվածաբանության զարգացման դինամիկայի և դրա դերիվացիայի արդյունավետության հայեցակետերից տարբերանշվում են մի շարք առանձնահատկություններ, որոնք հնարավոր են դարձնում քրդական դարձվածագրության՝ որպես առանձին ենթաճյուղի, խնդիրների ու նպատակների հստակումը:

Ընդհանուր դարձվածագիտություն տակավին հատկանշվում է իր պրոբլեմատիկայի, հե-

տաղոտական սկզբունքների, համակարգամակարդակային պատկանելության ու տեղի, այլ խոսքով՝ իր օլեզվարանական ստատուսի ճշգրտման ու որոշակիացման որոնումներով: Այս առումով Մ. Խամոյանի աշխատությունը ելակետային դրույթներ է առաջադրում, որոնք անպայման լծորդվում են դարձվածադիտական ընդհանուր հարցասիրություններին: Անդրադառնալով դրանցից մի քանիսին:

Լեզվական միավորի ամբողջական ընկալումից հայտնվել է մի նոր հատկություն, որը և պայմանականորեն անվանվել է «նշանակում» («назначение»): Հայտնի է, որ լեզուն ծագում է պահանջից: Մ. Խամոյանն այստեղից մակարբերում է՝ այն, ինչ ծագում է պահանջից, պետք է աներկրայորեն օժտված լինի նույն այդ պահանջը բավարարող հատկությամբ, այն է՝ նշանակմամբ, որ արդեն լեզվի համընդհանուր որոշիչ հատկությունն է: Այս եզրահանգման հիմքի վրա՝ չենք ընդունում մեք, ապա և առաջին գլխում ձևակերպվել են լեզվի և դրա տարբերատիպ միավորների սահմանումները:

Բազմաշտովում և տրամաբանական համոզիչ հիմնավորումներով առաջարկվում է դարձվածքի ստեղծման, կազմավորման մի ուշագրավ մոգել: Դարձվածքի լեզվահարողականացման իրացման գործընթացում նախապես լսվում-ընկալվում է նրա ձևը՝ հենյալարաբերական իրողությունը: Այնուհետև կայանում է դարձվածքի բուն նշանակության ըմբռնողությունը: Ուստի՝ «ձևից դեպի նշանակություն» սխեման արտացոլում է դարձվածքի իրացման, ընկալման ու ըմբռնման հետագիծը, իսկ հակառակ շարժումը՝ «նշանակությունից դեպի ձև», արդեն դարձվածքի ստեղծման կաղապար-մոդելն է: Դարձվածքն ըստ այս վերջին մոգելի վերլուծելիս ի հայտ են գալիս և գործում են երկու այլ իրողություններ՝ ա) բուն դարձվածաբանական նշանակություն, որի արտահայտման պահանջից է կյանքի կոչվել տվյալ դարձվածքը: Բ) բաղադրյալ նշանակություն, որը բաղադրիչ բառերի նշանակությունների միագումարն է: Վերլուծական պլանում դարձվածակազմական կաղապարն ունի «դարձվածաբանական նշանակությունից դեպի բաղադրյալ նշանակություն, այստեղից էլ՝ դեպի վերջինիս նյութական թաղանթ» շարժընթացի կառուցվածքային ենթակարգությունը: Հետևաբար՝ դարձվածաբանական նշանակությունը պայմանավորում է բաղադրյալ նշանակության ձևավորման պահանջը: Կյանքի կոչում այն, սերտաճում է դրա հետ, ընդունում նրա նյութական թաղանթը: Իբրև արդյունք, կազմավորվում և ստեղծվում է դարձվածքի լեզվական որոշակի միասնություն: Մ. Խամոյանը նկատում է, որ դարձվածային միավորները ստեղծվում են ըստ կառուցվածքային-իմաստարանական կաղապարի, այլ ոչ թե ըստ ազատ բառակապակցության կամ նախադասության քերականական կաղապարների, ինչպես կարծում են այդ տեսակետին հակադրող դարձվածաբանները:

Աշխատության երկրորդ գլխում դարձվածագիտության մեջ առաջին անգամ լայնքով ու խորքով մշակվում է դարձվածքների կառուցվածքային-իմաստարանական տիպաբանության մի համակարգ, որը տարբերվում է մասնագիտական գրականությունից հայտնի իմաստաբանական, իմաստաբերականական, ֆունկցիոնալ-կիրառական, կառուցվածքային-քերականական դասակարգումներից: Դարձվածքի գոյության վճռորոշ պայման է դիտվում կառուցվածքային ու իմաստարանական պլանների կայուն միասնությունը: Երաժշտական դարձվածքները ձևավորվում են նյութական տարրերի կառուցվածքներում, որոնց տարրերակումը խստորոշ կախման մեջ է գտնվում համապատասխան դարձվածային իմաստություններից (семаи́тема): Դրանով իսկ՝ հակադրվում են ոչ միայն ձևի, այլև իմաստության համապատասխան տիպով (էջ 82):

Որոշորդ գլխում առանձնացվել են քրդերենին հատուկ անվանողական, ձայնարկական, եղանակավորող և սպասարկու դարձվածքների քերականական հատկանիշները:

Թերևս նորամուծության արժեքով ընկալվի շորորոգ գլխում առաջադրված դարձվածքների դինամիկական դասակարգման գաղափարը: Այն հետամտում է դարձվածային միավորները զարգացման ընթացքի մեջ դիտելու, դրանց ստեղծվելու ընդհանուր պատկերը ճանաչելու, համապատասխան փոփոխությունները երևակելու խնդիրներ: Զատորոշվել են կազմավորման տեսանկյունից «շարժվող» դարձվածքների երեք խմբեր, որոնք զգտնվում են դիալեկտիկական զարգացման տարրեր փուլերում (էջ 229): Եվ սակայն օդիալեկտիկական զարգացմամբ բնութագրվող խմբերից մեկն իրականում ներառում է «հնացման, մահացման, անկման պրոցեսում գտնվող դարձվածային միավորները» (էջ 230): Հակասությունն ինքնին ակնհեր է: Միաժամանակ կարծում ենք, որ այս դուխը որպես բաժին կարելի էր տեղադրել յոթերորդ գլխի («Երաժշտական դերիվացիան ժամանակակից քրդերենում») սահմաններում: Դրանք ըստ էության լեզվական միենույն ոլորտին են վերաբերում: Դարձվածաբանական դերիվացիան

նույնպես ենթադրում է որոշակի տեղաշարժ, նոր լեզվամիտությունների առաջացման շարունակական գործընթաց:

Հինգերորդ զլխում փաստանյութի հանգամանալից զննումներով որոշարկվում են քրդերենի դարձվածային միավորների տարբերակայնության ու բազմիմաստության հիմնական տիպերը, դրանց գոյացման ուղիներն ու միջոցները:

Ձեռագեղութիւնը որպէս լեզվի դարձվածաբանական կազմի միավորը զլխում, որ վեցերորդն է, հետազոտողը շահեկանորեն ամրագրացնում է դարձվածաբանության համակարգչայնության գծերը, երևան հանում դրա համաքրդական և բարբառային, գործուն և պասսիվ դրոսեորումների դիտումները, ինչպես նաև դարձվածային միավորների ոճաբանական, թեմատիկ, հոմանիշային, հակահիշային, համանունական խմբավորումների գնահատումները:

Մ. Խամոյանը հետեղականորեն ձգտել է տեսական յուրաքանչյուր դիրքորոշում ամրակայել լեզվանյութից ածանցվող օրենքների ու օրինաչափությունների կոնտեքստում: Եվ զանազան ընդհանուր առմամբ հաջողվել է: Իսկ մեր հիմնական դիտողությունները ազերսիվում են մենագրության տերմինաբանական առադձի ու նորահավաք փաստանյութի առարկայական ցուցակավորման խնդիրներին: Անտարակույս, անհրաժեշտ էր «Ֆրազեոլոգիզմ» (ФРАЗЕОЛОГИЗМ) և «դարձվածային միավոր» (ФРАЗЕОЛОГИЧЕСКАЯ ЕДИНИЦА) տերմինային տարբերակներից մեկն ու մեկի գործադրման միօրինականությունն ապահովել: Այլապես՝ երկտերմինայնությունը որոշ «գիտնանա» է ստեղծում աշխատության կուռ ու տրամաբանված կառուցվածքի մեջ:

Առիթն օգտագործելով՝ կամենում ենք մի առաջարկ անել, որ վերաբերում է նաև հայ լեզվաբանական տերմինաբանությանը: Այստեղ «դարձվածաբանություն» (ФРАЗЕОЛОГИЯ) տերմինով անվանվում են և՛ տվյալ լեզվի դարձվածային միավորների ամրագրությունը, և՛ այդ լեզվական-բառապաշարային ունեցվածքն ուսումնասիրող գիտաճյուղը: Կարծում ենք՝ որոշակի նկատառումներով առավել ճիշտ ու նպատակահարմար կլինի նշված գիտաճյուղը զատորոշելանվանել «դարձվածադիտություն» (ФРАЗЕОЛОГИКА) տերմինով:

Մ. Խամոյանն իր աշխատության մեջ դիպուկ բնութագրումներով «հայտնաբերել» է քրդերենի դարձվածային միավորների մի ամբողջ նոր խումբ, որը զբաղված չէ նրա Վերահիշյալ բառարանում: Ցանկալի էր սույն ուսումնասիրության վերջում տեսնել այդ նյութի դասդասված երկրկզվյան ցանկերը ևս:

Հանրահայտ է, որ լեզուն յուրաքանչյուր էթնիկական հանրության կենդանի հիշողությունն է, նրա պատմական ուղու ճանաչարկված զկայականը: Քրդերենի հանդեպ հնչյունական համապատասխանությունների օրենքների, պատմահամեմատական և ներքին վերականգնումների մեթոդների անկողմնակալ ու բարեխիղճ գործադրումները հավաստում են նրա հիմնաշերտի անմիջական սերումը հնդեվրոպական նախալեզվից: Մինչդեռ փաստերի միտումնավոր խնդարյուրման կամ անտեսման պրակտիկան ցայսօր անարգել ձևով ասպարեզ է գտնում: Կասկածից վեր է, որ քրդերենի դարձվածաբանության՝ տարժամանակյա պլանով մանրազնին հետազոտությունը նոր կոմաններ ու փաստարկներ է հակադրելու քուրդ ժողովրդի ծագման և պատմության հնագույն շրջանի որոշ անզուսպ կեղծարարների տխրահամբավ տեսություններին: Մ. Խամոյանը, անշուշտ, խորապես գիտակցել է խնդրի գիտական ամբողջ կարևորությունը, երբ իր ուսումնասիրությունը վերջավորել է («Ենդրակացություն») նման աշխատանք ձեռնարկելու անհրաժեշտության ընդդեմամբ:

Մ. Խամոյանի «Քրդերեն լեզվի դարձվածաբանության հիմունքները» գիրքը դիտակայ հարցադրումների համարձակությամբ: ցուցադրական նյութի բազմակողմանի իմացությամբ ու իմաստավորումներով անվիճելիորեն ամրագրում է քրդագիտության զարգացման մերօրյա մարտահրավեր և ներդրում է ընդհանուր դարձվածադիտության բնագավառում:

Չ. Դ. ՄՍՏՈՅԱՆ

Բաճաթիբական գիտությունների բեկնածու: